

Հաճախ բարձրացվող հարցեր

Ինչպե՞ս է ԺՆԵՎԻ ԿՈՉ-ը կապ հաստատում ՈՊԱԵ-ի հետ:

Ոչպետական աքտորների հետ երկխոսությունը սկսվում է անձնական կապերի կամ 3-րդ կողմերի միջոցով, ինչպիսիք են հակամարտության փորձագետները, սփյուռքի անդամները, հակահետևակային ականների արգելման միջազգային ընկերությունների անդամները և այլ տեղական ոչկառավարական կազմակերպություններ: Այս կամ այն խումբը ներգրավելու որոշումը ընդունվում է մանրամասն քննարկման արդյունքում (խմբի բնույթը, նպատակները, առաջատարները, ներքին կառուցվածքը, անցյալում կուտակված փորձը և այլն), ինչպես նաև գնահատելով հակամարտության զարգացումը և այլ գործոններ, ինչպիսիք են «Պարտավորությունների մասին Արձանագրությամբ ստանձնած պարտավորությունների կատարման ցանկությունն ու հնարավորությունները»:

Ի՞նչն է մղում ՈՊԱ-ին ստորագրելու Պարտավորությունների մասին Արձանագրություններ-ը

ՈՊԱԵ-ը, որոնք ստորագրել են Պարտականություններ մասին Արձանագրությունը, դա կատարել են տարբեր պատճառներով, ինչպիսիք են իրենց աջակցողների պաշտոնաթողությունը, լինեն դրանք քաղաքացիական անձինք, թե զինվորներ, իրենց իրավասության կամ իրենց դե-ֆակտո վերահսկողության ներքո գտնվող տարածքներում բնակվող մարդկանց կայուն կյանքի և ապրելակերպի մակարդակի բարելավման նպատակով, նրանց գործունեության տարածքում հակա-ականային գործողությունների ծրագրեր սկսելու նպատակով կամ ցույց տալու համար նրանց ունակությունը, որ կարող են պաշտպանել մարդասիրական իրավունքի սկզբունքները: Ինչպես նաև կարևոր է նշել, որ ոչպետական աքտորների որոշ մասը ըմբռնել է, որ հակահետևակային ականները առավել սահմանափակ ռազմական հնարավորություններ ունեն: Մա ևս մեկ լրացուցիչ խթան է հանդիսանում պարտականությունների արձանագրությունը ստորագրելու համար:

Ինչպե՞ս են կատարում ոչպետական աքտորները իրենց պարտականությունները:

Որոշ ոչպետական աքտորներ, որոնք ստորագրել են պարտականությունների արձանագրությունը, կատարման գործընթացը վերահսկելու նպատակով ստեղծում են հատուկ մարմիններ և մեխանիզմներ: Ուրիշ դեպքերում ՈՊԱ-ին պահանջվում է աջակցություն ցուցաբերել: ԺՆԵՎԻ ԿՈՉ-ը իմպլեմենտացիայի գործընթացում նրանց տարբեր ճանապարհներով օգնություն է ցուցաբերում, ինչպիսիք են սեմինարների կազմակերպում, որպեսզի ստորագրող կողմերը տարածեն ականների արգելման սեփական քաղաքականությունը, հակա-ականային գործողությունների պլանավորման գործում օգնության ցուցաբերում և հակա-ականային գործողությունների աջակցություն այն տարածքներում, որոնք նախատեսված են պարտականությունների արձանագրությամբ:

Ինչպե՞ս է ԺՆԵՎԻ ԿՈՉ-ը իրականացնում պարտականությունների պայմանագրի կատարման մոնիտորինգ:

ԺՆԵՎԻ ԿՈՉ-ը հասկանում է, որ ոչպետական արտոթրների կողմից ստանձնած պարտականությունների կատարման համար պահանջվում է ժամանակ և որ մոնիտորինգը որոշ դեպքերում հիմնադրությային կլինի: ԺՆԵՎԻ ԿՈՉ-ը մոնիտորինգի ժամանակ պահանջում է, որ ստորագրող կողմը ներկայացնի հաշվետվություն պարտավորությունների պայմանագրի կատարման համար իրականացված միջոցառումների մասին և նույնպես ստանում է լրատվություն այս բնագավառում աշխատող անկախ տեղական և միջազգային կազմակերպություններից: Եթե գոյություն ունի լրատվություն պարտականությունների արձանագրությունը չկատարելու մասին, ապա ԺՆԵՎԻ ԿՈՉ-ը կարող է իրականացնել տեղում ստուգայց, ինչպիսին այս կազմակերպությունը կատարեց 2002 թվականին Ֆիլիպիններում, Կենտրոնական Միդանատյում: